ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԹԵՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրավերով փետրվարի 18-ին Մայր Աթոռ է ժամանում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Նորին սրբազնությունը, հայրապետական մասնավոր կարգադրությամբ, փետրվարի 9-ին մեկնել էր Հռոմ՝ ընկերակցությամբ Նյու-Յորքից տ. Մամբրե քհն. Գուզույանի, Հռոմի եկեղեցական իշխանության ներկայացուցիչների՝ կարդինալ Վիլդբրանցի, հայր Ժերոմ Համմերի և հայր Պիեռ Դյուպրեի հետ՝ կազմելու Հայոց Հայրապետի մայիս ամսվա ընթացքում Նորին Սրբություն Տ. Պավղոս Զ Սրբազան Պապին տալիք պաշտոնական այցելության ծրագիրը:

Հայրապետական պատվիրակ սրբազանը Հռոմում մնում է փետրվարի 9—12 օրերը՝ հաջողությամբ ավարտելով իր հատուկ առաքելությունը:

Նորին Սրբություն Տ. Պավղոս Զ Պապը բարեհաճել է հատուկ ունկընդրություն շնորհել Մայր Աթոռի պատվիրակությանը՝ տ. Սերովբե արքեպիսկոպոսին և տ. Մամբրե քահանային:

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը փետրվարի 18-ին ժամանում է Մայր Աթոռ՝ անձամբ զեկուցելու Հայոց Հայրապետին՝ Հռոմ կատարած իր ուղևորության արդյունքների մասին ու Նրա համաձայնությանը ներկայացնելու Վատիկան այցելության ծրագիրը:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը փետրվարի 25-ին հրաժեշտ է առնում Հայոց Հայրապետից և վերադառնում Փարիզ՝ իր թեմը: